

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

**ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշենի
10-րդ փողոց , հ5/4 հասցեում նախատեսվող
բազմաբնակարան բնակելի շենք**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշենի
10-րդ փողոց, հ5/4 հասցեում նախատեսվող
բազմաբնակարան բնակելի շենք

<<Էկո Մենեջմենթ>> ՍՊԸ
Տնօրեն՝ Ա.Մինասյան

<<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ
/Տնօրեն Ա.Վարդանյան



Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).....	7
1.4.1	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	7
1.4.2	<i>Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....</i>	16
2.	Շինարարության պայմանները	17
3.	<i>Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ</i>	19
4.	<i>Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ</i>	19
5.	<i>Շինարարության ժամկետները.....</i>	21
6.	<i>Առաջարկություններ շինարարության հրապարակի կազմակերպման վերաբերյալ..</i>	21
7.	<i>Շինմոնտաժային աշխատանքների իրականացման եղանակները.....</i>	21
8.	<i>Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....</i>	24
9.	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....</i>	31
10.	<i>Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը.....</i>	33
11.	Աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանություն	34
12.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	36
12.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	36
12.2	Կլիման	37
12.3	Օդային ավազան	39
12.4	Ջրային ռեսուրսներ	44
12.5	Հողերի նկարագիրը	45
12.6	Հողային ռեսուրսներ.....	45
12.7	Թափոնների կառավարում.....	45
13.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	46
13.1	Ռիսկերի գնահատում	46
13.2	Արտանետումների աղբյուրները.....	47
13.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն.....	47
13.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	47
13.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	47
13.3.3	<i>Հողային ռեսուրսներ.....</i>	48
13.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	49

13.3.5	<i>ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....</i>	50
13.3.6	<i>Աղմուկ և թրթռում.....</i>	51
13.3.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում.....</i>	53
14.	<i>Մշտադիտարկումների իրականացման պլան.....</i>	53
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	55
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	59
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	25
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող`	«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, ՀԱԷԿ-ի տարածք
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	ք. Երևան, ք. Երևան, Շարուր փ. 36/2
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը`	ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան
1.6 Հեռախոս`	
1.7 Աշխատանքային նախագծի մշակող`	

1.2 Հապավումներ

ՀՀ`	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ`	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ`	Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն
ՊՈԱԿ`	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՋԿ`	Ջուր, Կոյուղի

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշենի 10-րդ փողոց, հ. 15/4 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաբնակարան բնակելի համալիր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի շենքի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախագծի համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքերի սեփականության իրավունքի գրանցման N 18082020-01-0214 և N 18082020-01-0216 վկայականները, Երևանի քաղաքապետի կողմից տրված 29.09.2020թ. N01/18-07/2-85/45-913 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք), եզրակացություն տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների մասին:

Նախագծվող օբյեկտը գտնվում է ք.Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշենի 10-րդ փողոց հ.15/4 հասցեում:

Շինարարության տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 1132,65-1133,7 մ սահմաններում: 0-ական նիշը համապատասխանում է 1134,9 բացարձակ նիշին:

Կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Երևանի Դավթաշեն վարչական շրջանի՝ Աղաբաբյան և Սասնա Ծռերի փողոցները միմյանց կապող կառուցվելիք փողոցին հարող հողամասում: Հողատարածքը գտնվում է Դավթաշեն համայնքի բարձրահարկ ու ցածրահարկ կառուցապատման սահմանագծին : Նախագծվող բազմաբնակարան բնակելի շենքը տեղակայված է Դավթաշենի կամուրջի և Սասնա Ծռերի փողոցի առանցքի վրա՝ դրանով իսկ հանդիսանալով շատ կարևոր տեսողական դոմինանտ ամբողջ շրջանի համար :

Հողատարածքը ունի սակավ թեքություն՝ նիշերի առավելագույն տատանումը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք կազմում է մոտ 6,5 մ:

Հողատարածքում նախատեսված է սպասարկման ներբակային ճանապարհ, բացօդյա ավտոկայանատեղի, մանկական խաղահրապարակ և մարզահրապարակ :

Համալիրի ճարտարապետական և գեղարվեստական լուծումները նախատեսում են ժամանակակից , դինամիկ և հմայիչ ճարտարապետական կերպարի ստեղծում , որը կզարգացնի և կլրացնի շրջակա կառուցապատումը՝ հանդիսանալով կարևոր

տեսանելի կողմնորոշիչ համայնքի տրանսպորտային գլխավոր մուտքի հատվածում :

Նախագծվող շենքը բաղկացած է 3 մասնաշենքից. «Ա» մասնաշենք՝ բնակելի , «Բ» մասնաշենք՝ թեքամուտք և «Գ» մասնաշենք՝ ինժեներական սպասարկման մասնաշենք :

Նախատեսվող շենքը նախատեսված է 4 ստորգետնյա հարկ և 22 վերգետնյա հարկ : Առավելագույն բարձրությունը նախատեսված է 75,8 մ :

Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսված է ավտոկանգառ 126 մեքենաների համար: Մուտքը դեպի ստորգետնյա ավտոկայանատեղիները նախատեսված է կորաձև թեքամուտքով , որը նախագծված է որպես առանձին կառույց և անջատված է հիմնական շենքից սեյսմիկ կարով : Բոլոր մուտքերի վրա նախատեսված են հակահրդեհային դարպասներ : A/F առանցքներին հարող հատվածում նախատեսված է ստորգետնյա 1 հարկանի տեխնիկական նշանակության կառույց , որտեղ նախատեսված են էլեկտրական ենթակայան և պոմպակայան 2 հատ 100 խ.մ. տարողությամբ ջրավազաններ : Մուտքը դեպի նշված մասնաշենքը նախատեսված է թեքամուտքի -2 մակարդակից :

Առաջին հարկում նախատեսված է բնակելի մասի նախասրահը , որը ունի մուտքեր գլխավոր ու բակային ճակատներից : 1 և 2 հարկերում նախատեսված են բնակիչների սպասարկման համար տարբեր հասարակական նշանակության շենքեր: 3-ից մինչև 22-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ , որոնք խմբավորված են 2 մուտքային հանգույցների շուրջ :

Շենքը վերաբերվում է առաջին աստիճանի հրակայունությունը և հրդեհային անվտանգության Փ3.1 դասին : Դռների հրակայունության դասը 1-ին տիպի հակահրդեհային պատերում ընդունված է EI 60 : Ստորգետնյա ավտոհանգրվանը այլ նշանակության սենքերից անջատված է REI 150 հրակայունության սահմանով : Թեքամուտքը անջատված է ավտոկայանատեղիից հակահրդեհային EI 60 դասի հրակայուն դարպասներով :

Ե/Բ միջհարկային ծածկերը նախատեսված են REI 60 դասի հրակայունության :

Ստորգետնյա հարկում նախատեսված է չծխացող աստիճանավանդակներ՝ դեպի դուրս անմիջական ելքերով : Աստիճանավանդակի մուտքը ավտոկայանատեղիից իրականացվում է անցախույց-նախամուտքերով, օդի դիմհարով:

Աստիճանավանդակների դռները նախատեսված են հակահրդեհային EI 30 հրակայուն սահմանով :

Բոլոր վերգետնյա հարկերը ապահովված են էվակուացիոն ելքերով՝ չծխացող աստիճանավանդակների միջոցով : Վերելակների հորանները դռները նույնպես նախատեսված են EI 30 հակահրդեհային սահմանով :

Շենքը ունի հրշեջ մեքենաների մոտեցման հնարավորություն բոլոր ճակատներից : Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը կատարված է համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական, հակահրդեհային և սանիտարական նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան :

- Ընդհանուր տարածքը կազմում է 5183- քմ, որից
- Կառուցապատման մակերես 1394.5 քմ;
- Կանաչապատում 2553.4 քմ;
- Մայթեր, ճեմուղիներ, Բացօդյա ավտոկայանատեղիներ 1235.1 քմ;
- Նախատեսվող բնակարանների քանակը 158
- Նախատեսվող ստորգետնյա ավտոկայանատեղիներ 126

Հողամասերի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Ք. ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՁԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆԻ 10-Դ ՓՈՂՈՑ, Հ.15/4 ՀԱՄՑԵՈՒՄ ՊՏԱԿՈՂ ԲԱՋԵՏԱԲԱԿԱՐԱՆ ԲԱԿԵՄԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀՀ	Իրավիճակ	Աշխատանքների անվանումները	Չ.Գ.	Ծախսը	Հիմնադրումը	Աշխատատեղանակ		Գ	Կատարման ժամկետ	Վարչատարածքային միավոր	Ցուցանիշ 1	I ՏԱՄԴԻ				II ՏԱՄԴԻ				III ՏԱՄԴԻ				IV ՏԱՄԴԻ													
						Լարձակ	Կայացում					ամիսներ																									
												1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12																									
1	ա	Նախապատրաստական աշխատանքներ	4	5	6	7	8	900	1	10	60	10	11	12																							
		Երևույթների ցանկագրում, ժամանակագր կամ սինկրոնիզացիայի մեղմում, անհրաժեշտության դեպքում վերանայում, շինարարական մեքենաների և մեխանիզմների հարթակների կազմակերպում, մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինարարական վարչատեսչական և առնչաբարիստի մարմինների կազմակերպում																																			
		Հողային աշխատանքներ՝ հարթակ շինարարական աշխատանքները	՝	35000.0			1500		10	150																											
		Երկաթբետոնե կառուցվածքներ																																			
		Հիմքերի նախապատրաստական շնչոթի իրականացում	՝	400.0	01-01-001-04	2.5	125.00		12	150																											
		Հիմքերի իրականացում	՝	2700.0	01-01-001-10	4.86	1640.25							12																							
		Ջրամակարանների աշխատանքներ և ներքին նետախցի					300.00																														
		Երկաթբետոնե պլաների իրականացում	՝	1550.0	06-01-001-1	12.72	2464.50																														
		Երկաթբետոնե կմառների իրականացում	՝	2050.00	06-01-001-1	16.87	8028.56																														
		Երկաթբետոնե պլաների և վիճակագրման իրականացում	՝	600.00	06-01-001-1	9.91	9609.66	1.5	20	670																											
		Երկաթբետոնե ծածկերի իրականացում՝ մինչև 200 մմ հաստությամբ	՝	7300.00	06-01-001-1	8.67	7911.38																														
		Երկաթբետոնե առօրինակների իրականացում	՝	50.00	06-01-001-1	24.26	151.40																														
		Այլ երկաթբետոնե աշխատանքներ					900.00																														
		Շարժմանային աշխատանքներ					6000.00		10	600																											
		Ցանկային աշխատանքներ					900.00		10	90																											
		Բացվածքների լրացում, հատակներ, երկրի և արտաքին հարթորման աշխատանքներ					20400.0		30	700																											
		Ինժեներական ցանցեր					10000.0		12	840																											
		Ջրամակարարում, կոլուտի, կոնկրետամասնաբաժնի, օդափոխության ցանցեր, հատակ ցանցեր																																			
		Հենակայանների իրականացում ջարձակաբեռում և կանաչապատում																																			
		Հենակայան, ապակեներ, հարթակներ, սվաճանքներ					4500.00		10	450																											
		Շրջանակ					75172.19			4020																											

Բանկերի ամսական շահույթի 52 մարդ, միջին շահույթը 52 մարդ
 Բանկարական ուժի օգտագործման անհամապատասխան գործակիցը 1,4
 Աշխատանքների համառոտական գործակիցը՝ 4020/1440= 2,8

Ինժեներական մասեր

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ՋԿ մասի աշխատանքային նախագիծը մշակված է ըստ՝

- ա) Ճարտարապետա - շինարարական գծագրերի,
- բ) Տեղանքի գեոդեզիական հանույթի,
- գ) Շենքը ջրով և կոյուղիով ապահովելու տեխնիկական պայմանների,
- դ) Տեղանքի ինժեներա - երկրաբանական ուսումնասիրության

ՋԿ մասի նախագծում նախատեսվում են հետևյալ համակարգերը՝

Սառը ջրամատակարարում, Կենցաղային կոյուղի, Ներքին հակահրդեհային համակարգ:

Այս համակարգերը միացվում են առկա համապատասխան ցանցերին: Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014:

Սառը ջրամատակարարում

Շենքի ջրամատակարարման համակարգը փակուղային, ստորին բաշխման է մղման պոմպերի միջոցով: Մուտքագծի վրա նախատեսվում է ջրաչափական հանգույց: Խմելու ջրի կանգնակի վրա, կանգնակներից սնվող բոլոր ճյուղերի, ինչպես նաև գուգարանակոնքը սնուցող ջրամատակարարման խողովակի վրա նախատեսվում են փականներ:

Կոյուղի

Ջրահեռացումն՝ կոյուղու, ներքին ցանցը նախատեսվում է պոլիէթիլենե խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:


Ջրահեռացման կանգնակի վրա նախատեսված են ստուգիչներ: Կոյուղու թողարկները պոլիէթիլենե խողովակներով միացվում են առկա կոյուղու բակային ցանցին:

Ներքին հակահրդեհային համակարգ

Նախագծով նախատեսվում է ներքին հակահրդեհային համակարգ պողպատե խողովակներից, որոնցում ջուրը տրվում է մղման պոմպերի միջոցով: Ամեն հարկում նախատեսվում է 1-ական հակահրդեհային ծորակներ, որոնք տեղադրվում են պլաստիկ պահարանների մեջ հատակից +1.35 միջի վրա: Հրդեհաշիջման համար նախատեսված է պաշարապահ ծավալ:

Կանաչապատում և քարեկարգում


Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու կամ տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից, կամ ավտոցիստեռներով նախապես կնքելով պայմանագիր: Ոռոգման հաշվարկային ջրապահանջը կկազմի $60 \times 2553.4 \times 3 / 1000 = 460$ խմ/տարի:



CHUKOTSKAYA STREET

KALININA STREET

<p>СООБЩЕНИЕ</p> <p>2020 г.</p> <p>СООБЩЕНИЕ 1-2000</p>		
<p>ЭТАП РАБОТЫ</p> <p>ПРОЕКТИРОВАНИЕ</p>	<p>УЧАСТОК</p> <p>ПОДЪЕМНИКОВ</p>	<p>ПОДЪЕМНИКОВ</p> <p>ПОДЪЕМНИКОВ</p>
<p>ВЛАДЕЛЕЦ</p> <p>ООО "СПЕЦСТРОЙ"</p>	<p>ПРОЕКТИРОВЩИК</p> <p>ООО "СПЕЦСТРОЙ"</p>	<p>ПРОЕКТИРОВЩИК</p> <p>ООО "СПЕЦСТРОЙ"</p>
<p>АВТОРСКОЕ ПРОЕКТИРОВАНИЕ</p> <p>ПОДЪЕМНИКОВ</p> <p>ПОДЪЕМНИКОВ</p>		
<p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p> <p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p> <p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p>		
<p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p> <p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p> <p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p>		
<p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p> <p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p> <p>САМОУЧЕТНАЯ РАБОТА</p>		



ՆԱԽԱԳՈՐ	Ո. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ		Նախագծի անվանումը ԲԱՅՍՏՐԱԿԱՐԱՆԻ ԲԱՆԵՒԻ ՇԵՆՔ	Գծագրի անվանումը ԿԱՆԱԾՈՒՄԱՏՄԱՆ, ՄՐԴԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԳԱՆԱԿՈՒՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ	Փուլ Մաս Նախշուր 1:400 Թերթ 4	ՆԱԽԱԳԻԾ ՄԱՍ ՇՐՔԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱԾՄԱՆՈՒ ԹԵՐՔԻՆ ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՍՊԸ Թերթ		«ԱՊՐԻՍ ԿՐԻՏ» ՍՊԸ
			Ք. ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԱՅԱԾԻ ԿԱՐՅԱԿԱՆ ՕՐԶԱՆ, ԴԱՎԱՅԱԾԻ 10-րդ, թիվ 134					

1.4.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է

- աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,
- բացատրագիր,
- կատարվող աշխատանքների անվտանգության պահպանման հրահանգներ
- աշխատանքի կատարման ժամանակացույց,
- շինարարական հրապարակի գլխավոր հատակագիծ,
- հավելված / մոնտաժային մեխանիզմի ընտրություն,
- կատարվող աշխատանքների որակային ստուգման հրահանգներ/:

Բաժնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85*՝ “Շինարարության տնտրության և նախակատարման նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- ԴՕՇՏ 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԴԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

2. Շինարարության պայմանները

Նախագծվող օբյեկտը գտնվում է ք. Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշենի 10-րդ փողոց հ. 15/4 հասցեում:

Շինարարության տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 1132,65-1133,7 մ սահմաններում: 0-ական նիշը համապատասխանում է 1134,9 բացարձակ նիշին:

Կլիման բնորոշվում է երկարատև տաք ամառով և կարճատև մեղմ ձմեռով: Հուլիսին միջին ջերմաստիճանը կազմում է 24°C, ձմռան միջին ջերմաստիճանը՝ -2,4°C: Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60 սմ: Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ շինհրապարակի տարածքում բացակայում են:

Գրունտի վերին շերտը լիցքային է, չպառկապնդված, կավային, խճային կազմով (ժամանակակից տեխնաձին առաջացումներ): Շերտը համատարած է, 5-7 մ հզորությամբ:

Երկրորդ շերտը ձևավորված է սպիտակահողերից՝ փխրուն, թերխիտ կազմվածքով, սակավ խոնավ, կավավազային կազմի: Տարածումը նույնպես համատարած է, հզորությունը՝ 1,0-5,3մ:

Երրորդ շերտը հրաբխային խարամ է՝ ավազային, փոշային կազմով, տեղ-տեղ հանդիպում են խարամացված բազալտե խիճ և մանրախիճ (հրաբխային առաջացումներ): Շերտը համատարած է, հզորությունը՝ 1,8-3,5մ:

Չորրորդ շերտը ձևավորված է մոխրագույն բազալտներից, որոնք էլ հանդիսանալու են կառուցվող օբյեկտի հիմնատակ: Տարածման նիշերը տատանվում են 1125,8-1117,88 մ սահմաններում:

Շերտերի պրոֆիլային պատկերների ուսումնասիրումը վկայում է , որ ժայռային գրունտերը նվազագույնը սկսվում են 8 մ խորությունից՝ առավելագույնը՝ 15,7 (հորատանցք 1-ից դեպի հորատանցք 2 տեղամասում):

Ըստ միաշերտի էքսկավատորով մշակման բարդության (СНП IV-5-82) գրունտերը դասվում են V, III և I կարգ: Բազալտային գրունտերը պահանջում են նախնական փխրեցում:

Փոստրակի մշակման ժամանակ որոշ տեղամասերում, որոնք նշված են Գծագիր 1-ում, պարտադիր պահանջվելու են շեպերի կայունացման ճարտարագիտական միջոցառումներ, մյուս տեղամասերում՝ դրանց բացակայության դեպքում, պետք է ապահովել շեպի բնահողի բնական թեքման անկյունը, անհնարինության դեպքում՝ կիրառել վերոհիշյալ միջոցառումներ:

Փորվածքների մշակման, հետլիցքի իրականացման աշխատանքներն իրականացնելիս պահպանել ՄՆԻՊ 3.02.02-87 «Հողային կառուցվածքներ, հիմնատակեր և հիմքեր» պահանջները: Աշտարակային կոունկի հիմնատակի կայունությունը հաստատել փորձագիտական եզրակացությամբ:

Վերգետնյա մասում բազմաբնակարան շենքն ունի բարդ ուղղանկյունաձև ուրվագիծ՝ 42,0մ x 32,6մ առավելագույն առանցքային չափսերով և պարզ ուղղանկյունաձև ուրվագիծ՝ ստորգետնյա մասում՝ 42,0մ x 32,6մ հաստատուն առանցքային չափսերով: Ստորգետնյա հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղի, որի մուտք-ելքային լուծումը տրված է ստորգետնյա պարուրաձև թեքահարթակի տեսքով: Վերջինիս առանցքային տրամագծը կազմում է 21,9 մ: Վերգետնյա հարկերի բարձրությունները հիմնականում 3,3 մ են, ստորգետնյա հարկերինը՝ նույնպես: Առկա են հարկեր 4,5մ և 3,6 մ բարձրությամբ, շենքի առավելագույն բարձրությունը՝ +75.8 մ է:

Տարածքի կանաչապատումն իրականացվելու է ինչպես գրունտային մակերևույթների, այնպես էլ ստորգետնյա կառույցների երկաթբետոնե ծածկերի վրա՝ անհրաժեշտ ջրամեկուսցմամբ

Օբյեկտի կոնստրուկտիվ համակարգը շրջանակակապային է: Հիմքերը կողավոր սալային են: Տանիքը հարթ է: Ներքին հարդարումը և հատակները՝ ավանդական:

3. Առաջարկություններ օրյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվում է մրցույթով:

Շենքի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների, տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինությունների կիրառում ՀՀ Ա միջոցների օժտմամբ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

4. Առաջարկություններ օրյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը իրականացվում են ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

5. Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է **48 ամիս, 4 օրացուցային տարի**, որից 2 ամիսը նախատեսված է նախապատրաստական աշխատանքների համար:

6. Առաջարկություններ շինարարության հրապարակի կազմակերպման վերաբերյալ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

7. Շինմոնտաժային աշխատանքների իրականացման եղանակները

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- երկրաբաշխական հիմնարար ցանցի կառուցում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր ճանապարհների կառուցում,
- վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Փոստրակի փորման համար նպատակահարմար է **CAT 320** էքսկավատորի կիրառումը, որի տեխնիկական բնութագրերը բերվում են ստորև: Էքսկավատորը օժտված է տարբեր նշանակության ծայրային գործիքներով, այդ թվում հիդրավլիկ սեպով:



Շարժիչի հզորությունը ըստ ISO 9249	158 կՎտ (212 ձ. ու)
Պլատֆորմի ետնամասի թռիչքի շրջադարձի ժամանակ	3130 մմ
Տրանսպորտային լայնությունը	3190 մմ
Փորման առավելագույն խորությունը	7260 մմ
Սլաքը	6,15 մ
Բռնակը	3,2 մ
Շերեփը	0,7-2,15 խմ
Առավելագույն թռիչքի հողի մակերևույթին	մինչև 10690 մմ
Բեռնման առավելագույն բարձրությունը	մինչև 6930 մմ
Զանգվածը	29,4 տ

Փոստրակի փորման համար նպատակահարմար է երկրորդ, օրինակ **CAT 318** էքսկավատորի կիրառումը:



CAT 318 էքսկավատորի տեխնիկական բնութագիրը

CAT 318 էքսկավատորի տեխնիկական բնութագիրը	
էքսկավատորի տեսակը	Թրթուրավոր
Շարժիչի տեսակը	CAT C4.2
Շարժիչի հզորությունը (ձ.ու)	118
Շերեփի տարողությունը, մ ³	0,76
Լայնքը թրթուրների եզրով, մ	2,49
Երկարությունը տրանսպորտային վիճակում, մ	8,66
Բարձրությունը, մ	3,02
Փորման առավելագույն խորությունը, մ	6,16
Ընդհանուր զանգվածը, տ	17,8

Հանված գրունտը կարճաժամկետ կպահվի շինհրապարակում հետո կօգտագործվի ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ անմիջապես բարձում են ավտոինքնաթափերը և տեղափոխվում:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով, հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել գլղոնով

խորանարդային գրտնակով կամ տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացման համար նպատակահարմար է գույքային կադապարամածի կիրառումը:

Կոնստրուկցիաների ամրանավորումը առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին ձողերով, այնպես էլ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ է ստուգել ամրանի, միջադիրների և կադապարամածի տեղադրման ճշտությունը, ամրանը պետք է մաքրված լինի կեղտից և ժանգից: Բետոնի խտացումը անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթրիչներով:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է ավտոբետոնախառնիչներով՝ վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրմամբ:

Միաձույլ կոնստրուկցիաների իրականացումը նպատակահարմար է իրականացնել անջատ եղանակով: Առաջարկելի է տիպարային տեխնոլոգիական քարտերի կիրառումը:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կադապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1.5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կադապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70% ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80%:

8. Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Ստորգետնյա մասի կառուցման համար առաջարկվում է երկու ավտոմոբիլային վերամբարձ կոմունկ՝ LIEBHERR LTM 1100-4.2 և KC 55713-6 ГАЛИЧАНИН





Ավտոմոբիլային կրունկ LIEBHERR LTM 1100-4.2

LIEBHERR LTM 1100-4.2 կրունկի տեխնիկական բնութագիրը

Առավելագույն բեռնամբարձություն/սլաքի թռիչք	100 տ / 3 մ
Հիմնական սլաքի երկարությունը	11,5 – 60 մ
Սլաքի երկարացուցիչ	10,8 - 33 մ

Անիվային բանաձև	8 x 8 x 8
Կշիռը տրանսպորտային վիճակում	48 տ
Ատավելագույն հակակշիռ	28,2տ:

Գաբարիտային և կառուցվածքային չափսերը



Ավտոմոբիլային կրունկ КС 55713-6



ГАЛИЧАНИН

Առավելագույն բեռնամբարձությունը/սլաքի թռիչք, մ	25/3,2
Սլաքի երկարությունը,մ	9,7 - 21,7
Սագիկի երկարությունը,մ	9
Կեռիկի ամբարձման առաբելագույն բարձրությունը, մ	
- 21,7 մ երկարությամբ հիմնական սլաքի դեպքում,մ	21,9
- 21,7 մ երկարությամբ հիմնական սլաքի դեպքում և 9 մ սագիկի դեպքում,մ	30,0
Կեռիկի իջեցման առավելագույն խորությունը 9,7 մ սլաքով 5մ թռիչքի դեպքում,մ	12,0
Բեռի զանգվածը, որի դեպքում թույլատրվում է սլաքի սեկցիաների դուրսբերում. տ	4,0
Բեռի ամբարձման/իջեցման արագությունը, մ/րոպե	
- անվանական (մինչև 25 տ բեռով)	5,0
-ավելացված (մինչև 6տ բեռով)	12,0
- առավելագույն	96,0
Կրունկի շարժման արագությունը, կմ/ժամ	80
Չանգվածը տրանսպորտային վիճակում,տ	23,0
Բազային ավտոմոբիլի անիվային բանաձևը	6 x 4
Ավտոմոբիլի շարժիչը	դիզելային
- մոդելը	ЯМЗ-236БЕ
- հզորությունը,ձ. ու	250

Եզրաչափքերը տրանսպորտային վիճակում,մ (երկարություն x լայնություն x բարձրություն)


12 x 2,5 x 3,8

Շահագործման ջերմաստիճանը, ստիճ. , C

-40-ից մինչև
+40

Վեկտեռնյա մասի համար որպես հիմնական ամբարձիչ մեխանիզմ առաջարկվում է QTZ 125 HS6015 կցովի կրունկը, որի տեխնիկական բնութագրերը բերվում են ստորև:





СТРОИ-КРАИ.РФ

Կցովի վերամբարձ կոունկ QTZ 125 HS6015

Հենարանի առանցքային չափսերը՝ ,մ 4,5x4.5

Շարժիչի հզորությունը,կՎտ , 46-82

Առավելագույն բեռնամբարձությունը ,տ 8

Սլաքի առավելագույն թռիչքը, մ 60,0

Ամբարձման բարձրությունը /խարսխված, ազատ կանգնած վիճակում/ , մ 45.0

Նույնը՝ շենքին ամրակապված վիճակում՝ , մ 141,0:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է СБ-69Б ավտոբետոնախառնիչով , տեղադրումը՝ վերամբարձի , ավտոբետոնապոմպի կամ ստացիոնար բետոնապոմպի միջոցով :

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1,5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70 % ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար` 80 % :

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա` հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում, իսկ գործիքների, հարմարանքների, հանդերձանքի անվանացանկն աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ	QTZ 125 HS6015	1
2	Ավտոմոբիլային կտունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Ավտոմոբիլային կտունկ	КС 55713-6, Галичанин	1
4	Էքսկավատոր`	CAT 320	1
5	Էքսկավատոր`	CAT 318	1
5	Գլղոն	CAT CS 563	1
6	Բուլդոզեր	CAT D6R	1
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
8	Ավտոբետոնապոմպ	Merc B. Acrtos 4144 D	1
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	2
11	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	1

13	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	8
14	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
15	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
16	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
17	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝ 79 մարդ , որից

1. բանվորներ - 72 մարդ

2. ինժեներներ - 4 մարդ

3. ծառայողներ - 2 մարդ

4. այլ աշխատողներ - 1 մարդ

9. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ 22120 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբն մոտ 40տ անմիջապես ամբողջությամբ բարձվելու է ավտոինքնաթափերը և տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 7 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 72 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1440 օր

$$W_{\text{խ.տ.}} = (7 \times 0.016 + 72 \times 0.025) \times 1440 = 2753 \text{ խմ/շին. ժամ.}$$

b) **Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1170

$$U_1 = 500 \times 0.0015 \times 1170 = 877,5 \text{ խմ/շին. ժամ.}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3630 խմ/շին. ժամ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ(տեխնիկական պայմանը կցվում է):

Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով և տարաներով:

Աշխատողների կենցաղային պայմանները ապահովվելու համար կտեղադրվեն բիոզուգարաններ:

Շենքի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի, որի համաձայն լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ և

համակարգը կմիացվի էլեկտրամատակարարման ցանցին(տեխնիկական պայմանը կցվում է):

Շենքի ջերմամատակարարումը նախատեսվում է անհատական ջեռուցման սարքերով, շենքի գազաֆիկացումը կիրականացվի համաձայն գազաֆիկացման տեխնիկական պայմանի, որի համաձայն լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ և համակարգը կմիացվի գազամատակարարման ցանցին (տեխնիկական պայմանը կցվում է):

10. Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունը ապահովում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող տեխնիկական, տնտեսագիտական և կազմակերպչական միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է.

ա/կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը,

բ/արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը,

գ/շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգը ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի

Հանրապետության օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա,

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության 28.04.1998 թ. Թիվ 44 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ-ի դրույթների համաձայն:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը, շինարարական կոնստրուկցիաներ, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Գործույթային հսկման նպատակն է թերությունների բացահայտումը շինարարության ընթացքում և դրանց վերացման կամ կանխման միջոցառումների սահմանումը:

Գործույթային հսկումը ենթադրում է շինարարական և մոնտաժային պրոցեսների տեխնոլոգիայի պահպանման, նախագծային փաստաթղթերին, նորմերին, կանոններին համապատասխանության ապահովման միջոցառումներ:

Գործույթային հսկման արդյունքները գրանցվում են շինարարության վարման մատյանում:

Գործույթային հսկումն իրականացվում է տեխնոլոգիական քարտեզի կազմում առկա որակի օպերացիոն հսկման սխեմաների և նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

Գործույթային հսկման սխեմաները պետք է ընդգրկեն կոնստրուկցիաների ուրվագծերը /էսքիզները/ չափսերի և թույլատրելի շեղումների նշմամբ, որոշ դեպքերում երկրաբաշխական/գեոդեզիական/ ծառայության կամ շինարարական լաբորատորիայի կողմից հսկվող օպերացիաների և պրոցեսների ցանկը, ինչպես նաև հսկման կազմի ժամկետների և եղանակների վերաբերյալ տվյալներ:

11. Աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանություն

Կապալառուն շինարարություն և դրա հետ կապված աշխատանքներ իրականացնելիս ապահովում է շրջակա միջավայրի պաշտպանությունը և շինարարական աշխատանքների անվտանգությունը համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 749 հոդվածի:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից նրանց անհատական պաշտպանության միջոցների տրամադրմամբ (հատուկ արտահաքուստ, կոշիկ և այլն), բանվորների կոլեկտիվ պաշտպանության միջոցների կատարումով (արգելափակում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգլակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքերով գործող ՄՆԻՊ III-4-80* նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ հրահանգումն անց է կացվում ներածական, սկզբնական, կրկնվող, արտապլանային և ընթացիկ հրահանգումների ձևով:

Շինարարությունում զբաղված բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցում, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարիայի հետ կապված բոլոր միջոցառումների կատարումը կատարվում է աշխատանքներն իրականացվող կազմակերպության համապատասխան լիազորված անձի կողմից:

Էլեկտրաշարժիչով շինարարական մեքենաների մետաղական մասերը պետք է հողանցվեն:

Արգելվում է բարձրության վրա մոնտաժային աշխատանքներ իրականացնել քամու 6 բալլ արագության գերազանցման դեպքում:

Ավտոտրանսպորտի շարժման արագությունը շինհրապարակում պետք է գերազանցի 5կմ/ժամ:

Աշխատանքային տեղերի լուսավորման համար կիրառել 16 Վ լարմամբ էլեկրալուսավորման սարքեր: Շինհրապարակի լուսավորությունը պետք է 2 լք-ից նվազ չլինի:

Շենքի ներսում արգելվում է եռակցման և ներկարարական աշխատանքների իրականացումը պատշաճ օդափոխության բացակայության պարագայում:

Հակահրդեհային պաշտպանությունը պետք է իրականացվի համաձայն համապատասխան կանոնների: Կոնկրետ հակահրդեհային միջոցառումները պետք է մշակվեն ԱԿՆ-ում:

12. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

12.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախագծվող օբյեկտը գտնվում է ք. Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշենի 10-րդ փողոց հ. 15/4 հասցեում:

Կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Երևանի Դավթաշեն վարչական շրջանում՝ Աղաբաբյան և Սասնա Ծռերի փողոցները միմիջանց կապող կառուցվելիք փողոցին հարող հողամասում: Հողատարածքը գտնվում է Դավթաշեն համայնքի բարձրահարկ ու ցածրահարկ կառուցապատման սահմանագծին: Նախագծվող բազմաբնակարան բնակելի շենքը տեղակայված է Դավթաշենի կամուրջի և Սասնա Ծռերի փողոցի առանցքի վրա՝ դրանով իսկ հանդիսանալով շատ կարևոր տեսողական դոմինանտ ամբողջ շրջանի համար:

Հողատարածքը ունի սակավ թեքություն՝ նիշերի առավելագույն տատանումը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք կազմում է մոտ 6.5 մ:

Հողամասը իրենից ներկայացնում է կառուցապատումից ազատ տարածք:

Հողատարածքում նախատեսված է սպասարկման ներբակային ճանապարհ, բացօդյա ավտոկայանատեղի, մանկական խաղահրապարակ և մարզահրապարակ:

Շինարարության տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 1132,65-1133,7 մ սահմաններում: 0-ական նիշը համապատասխանում է 1134,9 բացարձակ նիշին:

Հողամասի չափը կազմում է 5183 քմ, առկա վիճակը կառուցապատումից ազատ հողամաս: Կառուցապատման տարածքին կից գտնվում է Դավթաշեն 2-րդ և ներբակային փողոցները: Հարևանությամբ 8.1մ-40.1մ հեռավարության վրա գտնվում բնակելի հասարակական շենք շինություններ:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Գրունտի վերին շերտը-լիցքեր չպառկապնդված, կավային, խճային կազմով: Հանդիպում են նաև բազալտի մեծաքարեր: Գրունտը սակավ-խոնավ է: Շերտի հորատված հզորությունը 5.0-7.0 մետր է: Շերտը համատարած է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Գրունտային ջրերը գտնվում են մեծ խորությունների վրա, դա պայմանավորված է հրաբխային առաջացումների բարձր ճեղքավորվածությամբ: Տեղամասում մինչև 28,5մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել եւ ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 50 մետրից խորը հորիզոններում՝ բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Դավթաշեն վարչական համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են շինարարության համար:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

12.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+41^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНИП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	1113	-2.9	-0.8	5,1	11.8	16.3	20.8	24,5	24.2	19.9	13,1	6.4	0.1	11,5	-21	41

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով




Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Ձնածածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	Ըստ ամիսների															
	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353			
Երևան	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47	50	53	152

12.3 Օդային ավազան




Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:




Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Աղյուսակ 2. Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում

Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ ³)	ՍԹԿ միջին օրական (մգ/մ ³)
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.067 (դիտ. N18)	18	-	0.020	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.088 (դիտ. N18)	175	-	0.018	0.04
Փոշի (7)	2.387 (դիտ. N18)	694	34	0.126	0.15
Գետնամերձ օդոն (7)	0.257 (դիտ. N19)	53	1	0.010	0.03

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

12.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրագրան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

12.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ավալիացած աղակալած:

12.6 Հողային ռեսուրսներ

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 58900 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, հետլիցք 8800 խմ (կարճաժամկետ կպահվի շինհրապարակում), մնացորդային քանակները 50100 մ³ ավտոինքնաթափերով ամբողջությամբ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

12.7 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 22120 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր և 40տ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/:

13. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին» կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

13.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

13.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

13.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

13.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
 - պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
 - շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
 - սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
 - շինարարական աշխատանքների ժամանակ շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:

13.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական

հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25լիմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

13.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
 - աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված ադրավայր,
 - Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

13.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրադբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
- սանիտարական կանոնները և նորմերը ապահովելու համար ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

13.3.5 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕՂԵՐՆՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԵՆՅԱՍՏ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Շինարարության փուլում հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար շահագործող ընկերությունում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է ստորև ներկայացված միջոցառումները.

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակա օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Նշված որոշման դեպքում պատասխանատու անձանց կողմից անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Բազաներում ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների մասին որոշում կայացնելու դեպքում նախատեսված իրականացնել միջոցառումներ՝

- I կատեգորիա՝ խստացվում է տեխնոլոգիական գործընթացների վերահսկողությունը,
- II կատեգորիա՝ ավելացվում են փաշու տարածումը կանխող միջոցառումները,
- III կատեգորիա՝ դադարեցվում են շինարարական աշխատանքները:

13.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

13.3.7 Թափոնների կառավարում

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում աստիճանաբար շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

13.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ:

Ըստ կանաչապատման նախագծի /դենդրոնախագիծ/ տարածքում տնկվելու են հետևյալ ծառատեսակները՝ թխկի կարմիր – 5հատ, գնդաձև ակացիա՝ 28 հատ, գնդաձև իլենի – 7 հատ, գնդաձև սամշիտ – 9 հատ, կատալպա – 12հատ, հուդայածառ – 1հատ, սյունաձև թույա – 54 հատ, փովոդ գիհի 9հատ, ձիակասկ – 13հատ, փշատենի 1հատ, սակուռա – 3հատ, ասպիրակ – 18հատ, բարբարիս – 10հատ, լացող ուռենի – 3 հատ, սովորական եղևնի – 12 հատ, արծաթափայլ եղևնի – 1 հատ, թխկի սրատերև կարմիր – 6 հատ, սամշիտ – 135 գժմ, կուսախաղող 396քմ, սիզամարգ 1520քմ, թզուկ վարդեր 60քմ:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվելու է Երևանի քաղաքապետարանի հետ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուտային բուսականության բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

14. Մշտադիտարկումների իրականացման պլան

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:

5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, իրականացնի աճի և կայացողականության գնումներ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է, ամբողջ շինարարության ընթացքում 2406000 հազ. դրամ:

Բնապահպանական միջոցառումներ, շինարարության ժամանակահատված		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	726000	726000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	48x35000	1680000
Ընդամենը շին/ժամանակ		2406000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
<p>Ընդհանուր դրույթներ</p>	<p>Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն</p>	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինարարական տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
<p>Շինարարական աշխատանքներ</p>	<p>Օդի որակ</p>	<p>(a) Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինարարական չի թույլատրվի:</p> <p>(d) Շինարարական աշխատանքների ժամանակ շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:</p>
	<p>Աղմուկ</p>	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Քանդման աշխատանքներ</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p> <p>Շրջակա տարածքների աղտոտում</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- Քանդման ընթացքում ջրցան</p> <p>- Քանդված շինաղբի բարձում և տեղափոխում քաղաքապետարանի կողմից հատկացված վայր</p> <p>- փայտե կոնստուկցիաներ, մետաղական մասերի և խողովակների օգտագործում ինարարության</p>

<p>Տարածքի բարեկարգում/ կանա չապատում</p>		<p>ընթացքում</p> <ul style="list-style-type: none"> - կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների; - ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար
<p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>		<ul style="list-style-type: none"> - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրույթներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
<p>Թափոնների կառավարում</p>		<ul style="list-style-type: none"> - Թափոնների հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը
	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p>	<p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p>

	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<p>- Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</p>
--	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման	Կապալառու, մատակարար

գնում			Գործընթացների ստուգում	ընթացքում	
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կառուցապատվող հողամաս	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում	Շինարարության Ավարտին	Կապալառու
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ընթացքում	Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույթաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԹՅԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) N 01/18-03/2-85145-913 «29» «09» 2020թ.

Table with 2 columns: Question/Requirement and Answer. Contains 15 numbered items regarding company registration, taxes, and legal obligations.

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	-----
11. Ստորգետնյա, կիսանկողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	Նկողային/ կիսանկողային հարկերում՝ ապահովել բնակարանների թվաքանակի առնվազն 70%-80%-ին համապատասխան ավերակայնագրերը:
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից նախկինում սրված փնխնիկական պայմաններին համաձայն:
12.1. (*) ջրամատակարարում, կյոլոլի, տաք ջրամատակարարում	----- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	----- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	----- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատա կյոլուր (ներառյալ դիտահորը) տեղադիրը	----- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	-----
12.6. արդահանություն	-----
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել ջրահեռացում: (ռեյինգի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Մշակել փորածրի բարեկարգման, կանաչապատման և ուղղաձիգ հարակազմման նախագիծ, հնարավոր է նախատեսել ճարտարապետական փորձ ձևեր, ցանկապատում, գրվազը և այլն: (ստեղծագործական պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորձ ձևեր, ցանկապատում, գրվազը և այլն)
15. Շինարարական նյութեր	Երկաթբետոն, սրբափայլ և կոպրփայլաշ բար, փայլ, մեփաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր: (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տակիցների, ճակատների բլոմների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	----- (արտակարգ իրավիճակներում մարկված, օրինակների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	Ապահովել հակահրդեհային նորմարիվ պահանջները, ապահովել հրշեջ հիշողանքների առկայությունը: (հակահրդեհային ակտիվության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀԸԼ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:
19. Շրջակա միջավայրի պահպանում	• Նախատեսել շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ: • Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և արհեստական ծագման գործոններին սահմանափակ կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմարիվ պահանջները: (շրջակա միջավայրը վնասվածքի ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկարի ունենալով ՀՀ կառավարության կողմից 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները: 111. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը սրվում է 2 ստաի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղաքաշինության ընդհանուր պետական լիցենզիայի մարմին ՍՄԻՊ 1.04.03-85* (Շինարարությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տնտեսության նորմերը) գերատեսչական ակտիվ սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն: 112. Տրոստան ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քակուման), վերականգնման, ուղղացման և բարելավագման աշխատանքների համար թույլտվությունը սրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տնտեսության նորմերով հաշվարկված ժամկետով: (տաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երկու փուլի: Հնարավոր է փուլային համաձայնեցում: (նշվում են առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)
Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ե Ր Ը	
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն այդ թվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:
<small>(ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի երաշխավորագիրը՝ հրավ կատարելով համապատասխան իրավական ակտի)</small>	
23. Միջանկյալ համաձայնեցում	ՀՀ քաղաքաշինության, փնխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: (իրավասու մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ լարիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջարկների փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ):
24. Հասարակական քննարկումներ	----- (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• Երևանի քաղաքապետի հետ: • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել փուլային ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ: (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնօրինակ պահպանության և այլ լիցենզիայի մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	Քուկարանների սպասարկման համար առաջին հարկում նախատեսել բաժանորդային փոստարկղերի տեղադրման համար համապատասխան տարածքներ:
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բեռնային, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

Սույն նախագծման թույլտվությունը սրվում է ի տրամ և ի փուլային թվով 27.10.2019թ. հ.01/18-07/2-Վ-2998-1377 նախագծման թույլտվության:


 ստորագրությունը
 Կ. Ս.

Երևանի քաղաքապետ՝
Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ
 «ստորագրող» Գ. Բաբայանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 18 օգոստոսի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՀԱԷԿ-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Դավթաշեն Դավթաշեն 10-րդ փողոց 15/4

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅԱԾ ՓԱՏՍԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 11/05/2020թ. թիվ 844, Անշարժ գույքի ներդրման պայմանագիր 30.07.2019թ. թիվ 1384, Երևանի քաղաքապետի որոշում 08.06.2020թ. N 1780-Ա, 12.08.2020թ. հ.2470-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-004-0024-0151

Մակերեսի չափը (հա)՝ 0.168111

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 18082020-01-0214, գաղտնաբառ՝ SLSL8IGRYLWX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարտին Զինյան
 Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
 անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 18082020-01-0214, գաղտնաբառ՝ S1.SL81GRYLWX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 18 օգոստոսի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՀԱԷԿ-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Դավթաշեն Դավթաշեն 10-րդ փողոց 15/5

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 11/05/2020թ. թիվ 844, Անշարժ գույքի ներդրման պայմանագիր 30.07.2019թ. թիվ 1384, Երևանի քաղաքապետի որոշում 08.06.2020թ. N 1780-Ա, 12.08.2020թ. հ.2470-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-004-0024-0150

Մակերեսի չափը (հա)՝ 0.350189

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 18082020-01-0216, գաղտնաբառ՝ CB3CAMJV4L7K

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ


Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարտին Զինյան
 Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
 անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎՎԱՅԱԿԱՆ N 18082020-01-0216, գաղտնաբառ՝ CB3CAMJV4L7K

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Հաստատում եմ
«Գազարով Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի տեղակալ-
Գլխավոր ճարտարագետ

 Ա. Հակոբյան
«13»...01...2020թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 10-րդ փողոցի թիվ 15/4 հասցեում սեփականատեր «ՀԱԵԿ-Բ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ կողմից կառուցվող բազմաբնակարան բնակելի

շենքի գազամատակարարությունը

(օբյեկտի անվանումը և հասցեն)

637մ³/ժ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել

տարածքի ԳԲ ցանցի միջին ճնշման ստորգետնյա գազատարից:

(գոյություն ունեցող գազատարի անվանումը)


որի պայմաններն են՝

- Միացվող գազատարում գազի ճնշումը 1.0-1.5 կ՝/սմ²
- Գազատարի սրամագիծը 630 մմ
- Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) անհրաժեշտություն
- Միացման կետը Ըստ տեխնիկական պայմանների:
- Լրացուցիչ պայմաններ Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում:

Հիմք՝

- Երևանի ԳԳՄ 13.01.2020թ.թ. No 22-13/53 գրությունը,
- Տեխնիկական պայմանները:

«Գազարով Արմենիա» ՓԲԸ
ԳԲՑ և ՆԳՀ Շ ու Ս բաժնի պետ



Յու. Նազարյան

Կազմեց



Հ. Հերզոյան



Երևանի Քաղաքապետարանի
Աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ
կարգավորման ծրագրերի բաժնի պետ՝ Ա. Սեդրյանին

09 հունվարի 2020թ.
N 104

Առարկան՝ Տեխնիկական պայմանի ելակետային տվյալներ

Հարգելի պարոն Սեդրյան,

Ի պատասխան Ձեր 27.12.2019թ. Թիվ 50/1-Վ-2998 Ղավթաշեն 10-րդ փողոց 15/4 բազմաբնակարան շենքի ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Աղաբաբյան փողոցին զուգահեռ անցնող d=400մմ ջրագծից d=80մմ միացումով, կոյուղու միացումը հնարավոր է իրականացնել Մանու Օտեր փողոցին զուգահեռ անցնող d=500մմ կոյուղագծից d=200մմ միացումով:

Տեղեկացնում եմ, որ վերոնշյալ աշխատանքները պետք է իրականացվեն «Վերլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի և համաձայնեցված նախագծի համաձայն:

Հարգանքով՝ *Wellsejan* Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Վարչախոսնառն՝ Ա. Մարտիրոսյան *[Signature]*

ՀԱՅԿԵՍՏԱՆԻ ԿՐԹՈՒՄԻ ԶՈՒՄՊՈՒՄ
104
09.01.2020



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

« Երևան Արմենեյան փող 127

N ՏՊ-ՃՀԱ-0.4/0001

<<08>> 01 2020թ.

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՃՀԱ տրամադրելու համար

Համաձայն ԷՄՕԿ-ի 13.9 կետի պահանջների

Տրվում է՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Մեղոյանին (27.12.2019թ., 50/1-Վ-2998) Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Դավիթաշեն 10-րդ փ., հ. 15/4 Պահանջվող հզորությունը՝ 1009 կՎԱ Մտող ցանցի լարումը՝ 0.4 կՎ

1. Էլ. մատակարարումը հնարավոր կլինի իրականացնել կառուցվելիք տրանսֆորմատորային ենթակայանի 0.4 կՎ վահանից, որի (կառուցվող ենթակայանի) 10 կՎ էլ. մտանք հնարավոր է իրականացնել ԲԵ0154-ի 10 կՎ ՔԱ-ից:
2. Նշված տարածքին հարող տարածքով անցնում են՝ «Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲ ընկերությանը պատկանող, ԵԿ «Դավթաշեն»՝ 0/35/10 բց. 10. 28 -ԲԵ0140 10 կՎ թվով երկու հատ ստորգետնյա մալուխագծերը:
3. Մինչ շինարարական աշխատանքներ կատարելու անհրաժեշտ է դիմել «ՀԷՏ» ՓԲ ընկերության «Մաշտոց» շահագործման շրջան /հտ. +37494002493/:
4. Հիմնական էլ. մատակարարման իրականացման համար, կառուցապատողը պետք է դիմի «ՀԷՏ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն (ամսավորապես՝ ք. Երևան, Արմենակյան 127)՝ ներկայացնելով ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջ երով նախատեսված փաստաթղթերը և ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:
5. Բազմաբնակարան բնակելի շենքի էլեկտրամատակարարման նպատակով՝ անհրաժեշտ է որպեսզի կառուցապատողի կողմից տրամադրվի 1՝ X8-96մ² հողատարածք՝ նոր ենթակայանի կառուցման համար:

Տեխնիկական տեսքին

Գ. Գրիգորյան

կառավար Գ. Սահակյան
Հեռ. 59.12.65